

ՀԱՐՑԱԹԵՐԹ 2

1. Ըստ անհրաժեշտության՝ կետերի փոխարեն լրացրո՛ւ համապատասխան տառերը:

Գարունը գալիս, բար...րանում է վեր՝ անտառը ներքևից շա...անակագույն դար...նելով: Ապա ներքևում ք...կիների ձորակում, բացվում ու ծավալվում է զմրու...տաշող կանաչը: Ձմեռը գնում, կանգնում է կոր...նթարդ սարի կատարին: Կկվի առաջին կանչով արթնանում է քնած անտառը, ու այդ շաղակրա...ը հայտնում է ամեն մի ծառի՝ կանաչով պ...նվելը, ամեն մի բողբոջի ճնկոտելը արթնանալիս:

Վերջին ծառի կանաչելու հետ, անսպասելի ելև...ջ տալով, մշուշ է դառնում, ան...անում դեղնավուն քարաժայռի ծերպում մի կերպ ծվարած վերջին ձնակույտը:

2. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները.

դարչնավուն –
վերածել –
տարածվել –
գմբեթածև –
շատախոս –

զարդարվել –
հանկարծակի –
մեզ –
վերանալ –
պատսպարվել –

3. Շարադրանքից դո՛ւրս գրիր հետևյալ իմաստն ունեցող բառերը.

ալիքածև վերուվար անելը –
բացվելու պատրաստվող ծաղիկ կամ ծլելու պատրաստվող ընձյուղ –
մարմնով ձգվել ու կտրատվել –
փոքրիկ կիրճ –

4. Շարադրանքից դո՛ւրս գրիր 4 ածանցավոր բառ, ընդ որում 1-ը՝ նախածանցով.

5. Շարադրանքից դո՛ւրս գրիր 4 բարդ կամ բարդ ածանցավոր բառ.

6. Շարադրանքից դո՛ւրս գրիր հնչյունափոխությամբ կազմված 6 բառ կամ բառածև՝ փակագծերում գրելով արմատի կամ հիմքի անհնչյունափոխ տարբերակը և նշելով հնչյունափոխության տեսակը.

7. Շարադրանքից դո՛ւրս գրիր 6 պարզ (արմատական) բառ և դրանցով կազմի՛ր 1-ական բաղադրյալ բառ.

8. Շարադրանքից դո՛ւրս գրիր համանուն ունեցող 2 բառ և դրանց համանուններով կազմի՛ր 1-ական նախադասություն.

9. Շարադրանքից դո՛ւրս գրիր 2 այնպիսի բազմավանկ բառ, որոնց հոգնակին կազմվում է *-եր* վերջավորությամբ.

10. Շարադրանքում գտի՛ր *ա* խոնարհման 2 բայ (որոնցից մեկը՝ ածանցավոր) և գրի՛ր դրանց անորոշ դերբայն ու վաղակատար ձևաբայը (կախյալ դերբայը).

11. Ձևաբանորեն վերլուծի՛ր հետևյալ բառերն ու բառածևները.

դարձնելով –
վեր –
այդ –
դեղնավուն –

12. Գրի՛ր շարադրություն՝ «Քո տխուր հայացքը...» վերնագրով (1 – 1,5 էջ):